

ԲՆՈՐԹԵԱՆ ԼԵՏ (ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐ)

Մայրերնեքու անտառ մը կայ երեւակայութեանս մէջ, բայց աւելի՝ տաճար մը քան անտառ: Հոն կուենինքը նրբահասակ ու նազելագեղ, եւ եղեւինները խնկարոյր՝ աղօթքի են կեցած բազկատարած, վսեմ ու հանդիսաւոր: Յաւիտենական ու խորհրդաւոր բան մը կայ անոնց շար-
ժուձեւին մէջ, մարդկային ցածութիւններու վրայ արդահատող շունչով խնկական աղօթք մը կը թրթռայ անոնց կուրծքին տակ, ուղեբժ մը դէպի ճշմարիտ ու մեծ բարձրութիւնները: Ի՞նչքան նուիրական է հոն կեանքը, հեռու աղմուկէ քայլերու եւ ձայների, առանձնացած սպի-
տակ կատարներով լեռներու ծոցին մէջ, ուր լոկ դադափարը կ'ապրի լուսեան թեւերուն տակ:

Մտայ ես օր մը այդ տաճարէն ներս, ուր թերաստուերներու պա-
րացանցին մէջ՝ թռչունի պէս բռնուած հեւացի պահ մը, ու անձանթ աշխարհ մը փոխադրուած ըլլալու հիասթափութիւնը եկաւ դրաւել զիս խնկոյն: Չմրուխտեայ մամուռն էր դորդը տաճարին, փռուած անծայր ընդարձակութեամբ, ուղղաբերձ բունները մայրերնեքուն՝ սիւններն էին ան-
մահաշունչ այդ դարբնային, որոնց վերեւ բացուած էր երկինք մը, մեր կապոյտ երկնքէն ալ աւելի գեղեցիկ ու խորախորհուրդ, դիտուած կանանց տարածութեան մը խորշերէն մանրանկարչական թովչութեամբ:

Եղեւինները կ'աղօթեն...: Լուսեանը կը խնկարկէ զանոնք, ու թե-
թեւ խարշափիւնը անոնց մանրիկ տերեւներուն՝ անըջական տատանում-
ներ կու տայ անոնց բազուկներուն, տարածուած աղօթականներու թե-
ւերուն պէս, որոնք կը շարժին քնքշօրէն ու իրենց հետ ալ բոլոր ան-
տառը կը ծփայ ներդաշնակ:

Եղեւինները կ'աղօթեն... անապատի ճգնաւորներուն պէս ամփոփ
ու վերասլացիկ, կ'աղօթեն հեռաւոր մարդկութեան մը համար, որ ա-
ղօթքն ի՞նչ է չի գիտեր, ու ճախճախիններու ոլորտէն բարձրանալու
կարողութիւն իսկ չունի:

Այդ աղօթքը հզօր է, սրաթուիչ. մայր բնութեան սրտին զարկն է
որ անարդեւ կը հետեւի իմաստուն Տնօրէնի մը կարգադրութիւններուն:
Ի՞նչ զարկ ու ի՞նչ նուազ...: Լուռ ու թախճոտ մենութեան մէջ՝ վը-
սեմ ներդաշնակութիւններ են. լոյսի խաղերուն ու նուրբ ձայներու ամ-
փոփիչ ու ծաւալիչ այդ սրբալայրը՝ խօսուն է այն բոլոր հոգիներու
համար, որոնք դիտակցութիւնը ունին իրենց էութեան եւ տիեզերական
համանուագի գեղեցկութեան:

Աչքերու խորը կ'ապրի զեռ լուսերանդի մոդական աշխարհ մը: Երե-
կոյեան պահն էր. արեւուն բեկրեկուած ճառագայթներէն, որ հոն կը
թափանցէին, ստեղծուած էր յատակին վրայ նրբաթել երկղներ լոյսի,
թերաստուերներու հեղասահ գետեր, խիտ ճիւղաւորումներու նրբանցք-

ներէն գաղտագողի իջած վար ու տարածուած: Հոն առանձնութեան
մէջ, մեղմ վանկերուն հետ սուլող, ճշող ու երգող մանր էակներու՝
որոնց միայն կարծես յանձնուած էր վայելքը այդ մոդական աշխար-
հին, ես ապրեցայ անմոռանալի ժամեր: Բնութեան հետ էի, եւ բնու-
թիւնը իմ մէջ ամբողջապէս. կը զգայի ես զիս մաս մը այդ անծայ-
րածիր վսեմին, որ որքան գերազանց ինձմէ, այնքան աւելի հաղորդա-
կան ու ներգործիչ էր իմ ուժերուն եւ կարողութիւններուն վրայ: Բնու-
թեան հետ էի եւ Աստուծոյ հետ: Աստուած բնութիւնը չէ, անհունա-
պէս վեր անկէ իր էութեամբ, ինչպէս պատճառն իր արդիւնքէն, բայց
կ'արտացոլար հոն իր գործին մէջ ամէնէն ազնիւ եւ ամէնէն զբաւիչ
կողմերով: Մեր իմացականութիւնը անկարող Աստուծոյ մէջ զԱստուած
տեսնելու, վարժած է իր ձեռակերտին մէջ փնտելու գայն ու հիանա-
լու այդ Սկզբնապատճառին անսահման կատարելութիւններուն վրայ: Կը
զգանք ստուգիւ որ շատ տկար է մեր չափանիշը երբ կը մօտենանք
այդ Գերազոյն էակին: Մեր միտքն այնպէս է՝ ինչպէս աւազի հատիկ
մը անապատի ընդարձակածաւալ աւազուտին առջեւ, կաթիլ մը ջուր՝
ովկէանի անեղր լայնութիւններու դիմաց. բայց մենք գոհ ենք երբ կը
մօտենանք այդ նուազազոյն չափով իսկ գեղեցկութիւններու անսահմա-
նութեան: Գոհ ենք, որովհետեւ կը լեցուի մեր փոքրիկ չափը, կ'առ-
նենք ուրախութեամբ այնքան՝ որքան կը տանի մեր տարողութիւնը,
ու կը կարծենք բան մը հասկնալ, ու երջանիկ ենք արդէն:

Հոգեկան այս գոհունակութիւնը պատրանք մըն է անշուշտ հոս
մեր մէջ, բայց երջանիկ պատրանք մը: Վասն զի իսկական երջան-
կութիւնը, բուն երանութիւնը ճշմարիտ գոհացումով մեր հոգւոյն բոլոր
կարողութիւններուն, կը խուսէ մեզմէ...: Աստուած՝ որքան որ մեր
չուրջն է, որքան որ մեր մէջն է, սակայն մենք կոյր ենք տեսնելու
համար զինք էապէս, թռչուններ ենք ջախջախուած թեւերով, թռչելու
անկարող դէպի անոր ծոցը, ուր կը գտնուի անխառն աղբ երջանիկու-
թեան: Վասն զի հոս, նիւթի համապարփակ ծովին մէջ, ամէն ինչ բնա-
կան ձգտումով մը դէպի յատակը կը խորասուզուի թանձր ու ծանրա-
կան մարմիններու պէս: Ու նիւթի այս ծովէն հազիւ թէ տեսանելի
էրանակով մը դուրս կը ցցուին միայն մեր իմացական ուժը, հոգե-
կան սլացքները, միշտ երկիւղով մը՝ կորսուելու նիւթին այդ լոյծ գան-
դուածին մէջ: Բնութեան ընդհանուր կենսունակութեան մէջ հետեւա-
բար լոկ մարդն է՝ որ կը վայելէ երբեմն այս առանձնաշնորհութիւնը
եղելու վեր նիւթէն, ապրելու հոգեկան մթնոլորտի մը պարունակին
մէջ, առանց սակայն ամբողջական վայելքն ունենալու անոր:


Աւա՛ղ, ո՛րքան քիչ են այդ պահերը, մտքի ու հոգւոյ կեանքին
նուիրուած այդ անդուգական ժամերը: Ես բախտն ունեցայ ապրելու
այդ երջանիկ պահը՝ երբ գտայ ինքզինքս օր մը լեռներու բարձրու-
թեան վրայ⁽¹⁾, ծառերու եւ առուակներու մտերմութեան մէջ, խոտի

¹ Ձրաստենէ գիւղը, որ կը գտնուի Տոլմիթներու մէջ:

լեռներն անդամ խօսուեն կը դառնան, հողիս կը սլանայ անցեալի յու-
շերով ողորուն, դէպի եղեւիններու մողիչ տաճարը, դէպի թարմ ու
կոյս դալարութիւնները լեռնահովիտներու, ուր չեն հասնիր մեծ ամբո-
խին մողեզին դալարումներուն աղեխարչ ճիւղը, կեանքի մղձաւանջին
աններդաշնակ արձագանգը, ու ես կը վերապրիմ նորարդորջ երջանկու-
թեամբը իմ անցեալին:

15 Մայիս 1945

Հ. Մ. Ճ.



ՄԵՂՄ ԽՕՍԵՑԻՔ

Իմ սրտիս հետ խօսեցէք դուք մեղմաճայն
Նա կը դողայ եւ թեւերու աղմուկէն.
Հանդարտօրէն խոնարհեցէք իր վերան
Լըսելու հոն իր տենչանքներն հոգեղէն:

Ձերդ պատուհան աշխարհներուն այս ունայն
Պճնեցէք դայն ծաղիկներով փափկասուն.
Սիրոյ խօսքեր քննարական թող ըլլան
Անփորձ է նա փողոցներու կանչերուն.

Ծաղիկի նրման չուտ կը թողմի ձեր շունչէն
Քիչ մը բուրում խառնեցէք ձեր տենչերուն.
Կրնայ փշրել նոյնիսկ սիւզի թեւերէն
Գիշերը դայն մէջը դըրէք վարդերուն:

Եւ իր մօտէն անցէք թաւիչ կօշիկով
Շուրքերն ինչպէս վարդերու մէջ կը մտնեն
Երկու շուշան ինչպէս կ'ապրին իրար քով
Իմ սրտիս հետ խօսեցէք դուք մեղմօրէն:

Քենիս 31 - Ժ - 1942

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՑԱՆ

Գրական վարուցան կոչուած այս բաժնին
մէջ՝ Խմբագրութիւնս նպատակ ունի պար-
բերաբար արձագանգը տալու արտագրու-
թիւններու՝ որ հայ դրական ասպարէզին
վրայ կ'երեւան եւ որոնք որոշ արժանիք
մը կը ներկայացնեն եւ օգտակարութիւն
ունին մեր ընթերցող հասարակութեան:
Ստուգել պատերազմի վեց տարիներուն՝
մենք չգիտցանք թէ ինչ նոր հեղինակու-
թիւններ ողջունուեցան: Այս պակասի մա-
սին արդէն ակնարկած ենք մեր նախնի-
թաց թիւին «Հայկական արձագանգ» բաժ-
նին մէջ: Կը յուսանք որ մօտեւս, երբ
դեռ աւելի ճամբաներու հաղորդակցու-
թիւնը դիւրինայ երկրէ երկիր, հասնին
մեզի այլեւայլ հայ գաղութներու մէջ
լոյս տեսած հրատարակութիւնները, ինչ-
պէս էր պատերազմէն առաջ: Իւրաքան-
չիւր դրող կամ գրասէր հայ՝ պէտք է
փոյթն ունենայ առաքելու գրքեր Ս. Ղա-
զարու Մատենադարանին, ուր ամէն հայ
ուսումնասէր հուսկ կը դիմէ իրեն մե-
ծագոյն եւ ապահովագոյն մատենադարա-
նը ազգին, ստուգելու եւ ուսումնասիրե-
լու համար խնդիրներ՝ որ ազգային ու-
սումներու կը վերաբերին: Ուստի յանուն
հայ մատենագրութեան, պատմութեան,
հնախօսութեան, յանուն հայ լեզուի եւ
գեղարուեստի, յանուն հայ կեանքին եւ
մշակոյթին, կոչ կ'ուղղենք հայ գրողնե-
րուն եւ հրատարակիչներուն՝ որ ըջօրէն
նկատի առնեն այս կէտը եւ առաքեն գէթ
օրինակ մը իրենց հեղինակած կամ հրա-
տարակած գրքէն, գրքոյկէն, պրակէն,
թերթէն, եւն:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՇՐՋԻԿ. «Ծաղիկէ ծաղիկ». Նօթեր Արճէշ
քաղաքէն, Պուրէշ 1942: -

Շրջիկ կեղծանունին տակ Յ. Ճ. Սիրու-
նի՝ ի լոյս ընծայած է Ծաղիկէ ծաղիկ խո-
րագրով գեղեցիկ ամփոփոյք մը խորհրդ-
դածութիւններու, հայ արուեստի ու հայ
տաղանդի կատարած գերին վրայ դանա-
ղան ազդերու նախնիներէն ներս: Գըլ-
խաւոր հարցը սակայն՝ է Ռումանիոյ
Քուրթա-տէ-Արմէշ քաղաքին մէջ իշխա-
նական եկեղեցիին եւ վանքին ճարտարա-

պետութիւնը, որ ըստ վերջին քննութեան
հայկական ծագում ունի եւ զոր ինքը կու-
ղայ փաստացի կերպով մեզի հաղորդելու:

Արճէշ՝ ուսմանական քաղաք մըն է հա-
մանուն նահանգին մէջ, քանի մը հազա-
րամեզր հեռու Փիթէշէն, գեղեցիկ դիր-
քի վրայ կառուցուած: Հոն է որ առաջին
անգամ իշխանական աթոռը հաստատուած
է եւ ըստ ուսմէն պատմութեան՝ Նէակո-
յէ Պասարապ Վօտան (1512-1521) շինել
տուած է Արճէշի վանքն ու եկեղեցին,
վատնելով գրեթէ իր բովանդակ հարստու-
թիւնը: Թէ՛ վանքը եւ թէ՛ եկեղեցին կը
պահեն իրենց ծոցին մէջ դամբարաններ
ուսմէն արքայազուններու: վերջին արքա-
յական շիրմներն են երկու փառաշուք ա-
մօրներու՝ Քարօլ Ա. ի եւ անոր կողակից
ու թողակից էլիզապէթթային, որ գրա-
կան աշխարհի մէջ ճանչցուեցաւ Քարմէն
Սիլվա անունով: Կը պատմուի որ այս
թագուհին շատ կը սիրէր առանձնանալ
Արճէշի բարձունքը, խորհրդածելու ու ըզ-
մայլելու համար հոն բնութեան վրայ:

Ռումանիոյ Քուրթէա-տէ-Արճէշի եւ
Հայաստանի Արճէշ քաղաքին միջեւ առա-
ջին անգամ կապ տեսողը եղած է ուսմէն
նշանաւոր գիտնական, հնախօս ու գրա-
դէտ Հաժմէտ, որ հրապարակին վրայ
գնելով այս հարցը՝ եզրակացուցած է թէ
հայկական գաղութ մը եկած հաստատուած
է հոն եւ շինած վանքն ու եկեղեցին:
Հաժմէտ իբր ստոյգ մեկնակէտ՝ կ'ըն-
դունի որ մեր Վանի Արճէշը շատ աւելի
հին է քան Ռումանիոյ Արճէշը, որ հա-
յերը գաղութներ հաստատած են իրենց
հայրենիքէն դուրս, մինչ ուսմէնները եր-
բեք գաղթած չեն, որ ԺԳ. դարուն հայ
գաղթականութիւն մը կու գայ հաստատ-
ուիլ Թլմաշ եւ կ'ունենայ իր սեպհական
կէտին կը յիշատակէ որ 1275ին ըստ
Սմբատ հայ պատմագրի տուած տեղեկու-
թեան (Hist. des Croisades, Documents ar-
méniens 1868, հտ. Ա. էջ 608), Վանի
շրջակայքը ենթարկուելով ասաւոր երկրա-
շարժներու, Ժողովուրդէն մաս մը ելած
գաղթած է իր հայրենի հողէն: Յեցած
այս վկայութեան վրայ կը հետեցնէ որ
այդ թուականներուն կամ անկէ առաջ,
հասած են խումբ մը հայեր մինչեւ Կար-
պաթները եւ հիմնած հոն քաղաք մը ի
յիշատակ իրենց Արճէշին, ու կառուցած